

ԻՐԱՎՈՒՆԿ

ՄԱՐՏԻ ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՄԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ

Գովարիտյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Անհատական համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Անհատական » 2.60 տոլ. վեցամսեայ 1.50
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկիլ հետեւեալ հասցեով
ԽՐԱՎՈՒՆԿԻՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ՀՐԱՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա)
Редация на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)

Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խնայարարեան ուղղեալ գրութիւն
եւ չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
անդամի կամ մասնակցի
Պատկերները տոլ 20 անկիր. երե-
ւոյն աւելի անգամներու համար 20 0/0
գնդ կը լինի:

ԱՐՁԱԳԱՆԿՆԵՐ

Մեր յարգոյ բաժանորդները
քող յարեւաձին յիշել քէ ինչպէս
ամեն քերթերու նայնպէս եւ իրա-
տանքի բաժնեգիրը կանխիկ է եւ
ներկայ տարեշրջանի երրորդ աւ-
տոյն մէջ կը գտնուի:

Կի. «Արձագոյն» մեծ օրաթեր
թիւ արգէն խաբանուեցաւ ու ե-
ղած «Մշակ» ու «Նոր Դար» եր-
կու փոքրածաւալ օրաթերթերէ
զատ ուրիշ մ'ալ հրատարակելու
արտօնութիւնը կը զլացուի: Միւս
կողմէ պէտք չէ անուշադիր թո-
ղու Մայր Աթոռի մասին չըլած
գողութեան ու զիջումներու զը-
րոյցները. անոնք երեկուքնէ ի վեր
չէ որ գոյութիւն ունին: Ռաֆֆի
արգէն «Խենթ»ին մէջ այդ առ-
թիւ Մանկունի Սրբազանը կը
հարաւածէր. կերեւայ թէ վաս-
պուրականի արծիւը ալ շատ ծե-
րացեր է ու անոր շուրջը ուրա-
ցող խորհրդներու շուրջը յարմար
առիթմը գտեր է:

Գալով Պոլսոյ Պատրիարքարա-
նին, «Վ» այդ մասին ամենքինս
ալ քիչ շատ բան մը գիտենք:
Օրսանեանի պէս ապիկար եկեղե-
ցական մը որ ամեն բան անուշ
տեղը կապելու Լոպանօֆեան քա-
ղաքականութեան կը հետեւի — և
որովհետեւ Սուլթանը չի կրնար
բռնադատել, գործերը միշտ ի վեր
նստ մեզ կը կարգադրէ — ինչ
կրնար ընել կարգ կտնոն մտցնե-
լու համար Պատրիարքարանի մը
մէջ, որուն համար իղմիրեան,
հոն որը դնող խաչագողներու վահ-
մակը վտարելու յուսակաւոր «Ալ-
բանոց մ'է մեր Պատրիարքարանը»
կը գոչէր, ինչպէս յայտարարեց
ինչ նախորդ Պատրիարքին մէկ
ազգականը: Պատրիարք, կրօնա-
կան ժողովոյ ատենապետ, գերա-
տենապետ, պատ. փոխանորդ,
գործակաւոր, Եւսախմի, ամեն
քրի ալ, առանց բացառութեան
կաշառակերութեամբ կը շարժին
ու կը տնօրինին. այս բաները
անձամբ ստուգած եմ: Դեռ այս
ամառ, ոստիկանատան դիմացի
սրճարանին մէջ, ուր ստէպ կեր-
թայի, լուակաց ականատեսը կըլ-
լայի Պատ. Բ. Գործակաւոր,
Յարութիւն էֆ. անուանուած խո-
շոր ստոնակին շահատուութեան
ցը որ հայ բանտարկեալներ աղա-
տելու իրը փրկանակ, զեղանի կի-
նորէ դրամէ ուրիշ բաներ ալ կը
պահանջէ եղբւ. այս հրէշը, իր
զաւկին հետ որ Պատրիարքարա-

նի մէջ կը պաշտօնավարէ, իրեն
դիմաց լուրը հայերէն — ու ամեն
քրի ալ իրեն կը դիմեն, քանի որ
Ա. Գործակաւորը ուրիշ բաներով
կարգի — միշտ գրամ կը պահան-
ջէ, առանց խափելու զինքը չըլած
պատուիրէր. բանտարկեալի մը ա-
զատութիւնը կը ձգձգէ, կամաւ
գժուարութիւններ կը յարուցանէ
քանի մը մէծիտիյէ աւելի շորթե-
լու համար:

Տարաբաղդ ազգ, որուն փճաց
մանը կաշխատին ամեն տեղ, ա-
մեն կերպով: Սակայն արիա-
նանք. ախ, ժողովուրդ մը որ
Ազատեաններ, Այվազլուքներ,
Միլիթօֆներ, Միլիթօ խաններ
կարտագրէ մինչ իր մահուան
վճիւրը կատարագրեն, անկարելի է
որ այսպէս փճանայ. հայերը սո-
վորութիւն չունին զիրենք չըլած
պնդող հարածանքներէն վհառելու
ու չպիտի բաւի որ, մենք, մեր
նախնիքներէն աւելի լուսավորեալ,
յուսահատեցանք. իրաւ, «չ» մէկ
տանի մեր գոյութիւնը այսչափ
վտանգուած էր. Ռուսիոյ հայերը
խորանշուր որ քալ մը եւս դէ-
պի ուստացում կը յառաջխաղան:
Տաճկահայերուն կացութիւնը յո-
ռեղոյն է. մահմետականութիւնը
հայկական ինքիւրը հայերու ջրն
մամը վերջացնելու քաղաքականու-
թեան կը հետապնդէ տու այժմ
զգլխի յաջողութեամբ մը: Ար-
տասահմանի մէջ ինքզինքնին յե-
ղափոխական յորժոյթով կարգ մը
խաչագողներու յաջողութեան շըր-
ջանին մէջ կը գտնուինք. մեր յե-
ղափոխական մարմինները զիրար
կասկածելի ցոյց տալէ զլուխ ա-
ռած չունին. ժողովուրդը, զգուած
այդ եղբայրասպան կռուութեան
բէն, առ այժմ կը նախընտրէ ձե-
ռնաշ մնալ ու իրաւունք ալ ու-
նի: Մեր հրապարակագիր գոր-
ծիչները, թէ զ'որար չեն տանիր
ու գրչակներու ճանկէն ալ չեն
աղատիր: Անկարելի է որ այս
այսպէս շարունակուի:

Արգէն քրիստոնէութիւնը ու
Մահմետականութիւնը, իրենց
շահը մեր փճացման մէջ տեսնե-
լով կ'երպով մը կը զաշնակցին:
Մեր միակ ապաւենը կը մնայ

արտասահմանի հայութիւնը ու յե-
ղափոխական կազմակերպութիւն
ները. «Բոս Էքսիմիտայ»ի հրատա-
րակութիւնը, Պարսկահայոց պարթ-
նելու պատրաստութիւնը ու Ռու-
սորի համաժողովոյն գումարումը
մեզ արտապնդելու հանգանակ ու
նեցող նշաններ են. համաժողովն
ըր ժողովուրդը յեղափոխութեան
հետ չիման մէջ կը դնեն. փափա-
քելի էր որ յեղափոխական մաս
նախաձեռնող քիչ մ'ալ ժողովուրդի
կամքը հաշուի տունէին, եթէ Սո-
ֆիայի Մակեդոնական բարձր կո-
միտէն Հ. Բ. Դաշնակցութեան
հետ համընթաց գործակցելու հա-
մար բանակցեցաւ ու համաձայնե-
ցաւ, երեք տարի տուալ Սոֆիա
գումարուող Մակեդոնական մեծ
համաժողովոյն որոշմամբ ու թող
տուութեամբ էր. թերեւս կա-
րեւորութեան զուրկ չըլլայ հոս ը-
սել թէ այդ համաժողովոյն որոշ-
մամբ պայտաթուղթեր ապադրուե-
ցան, վճարելի երբ Մակեդոնիան
աղատագրուի ու Մակեդոնացիներ
ու մէջ ցրուեցան:

Ուստի համաժողովոյն տնօրի-
նած գրական որոշումներու շար-
քին մէջ, մասնաւորապէս ուշա-
գրաւ է տեսնել որ մեր յեղափո-
խական մարմիններու միացման
հարցն ալ ինկատի առնուած է.
համաժողովոյն գործադիր յանձնա-
խումբը զայն իր օրակարգը ան-
ցուցեր է. կնճռատ հարց, այո՛.
բայց ամենակարեւոր ու ամենաան-
հրաժեշտ: Հակառակ շատ մը դը-
ժուարութեանց, պէտք է, ինչ որ
ալ ըլլայ, միութեան խնդիրը մեզ
ամեն բանէ աւելի շահագրգռէ.
միութեամբ ինչ չպիտի շահինք
մենք, երբ տարներն իսկ մեր
գործակցութեան շահ կ'ականակնու-
թիւններն նախնական կէտերուն
զրայ խորհրդակցելու համար եղած
նախադրած մը անյաջող մնաց
գժուարագրուի Ու Աթէնքի «Միութե-
թիւն»ը էն քիչ բաժինը չէ որ
ունէր այդ անյաջողութեան մէջ:
Թուալի է որ Գործադիր յանձնա-
խումբին ջանքերը աւելի արդիւնա-
ւոր կըլլան. արգէն «Դրոշակ»
մէկէ աւելի անգամներ յայտարա-
րած է թէ Դաշնակցութիւնը մի

ուժեղ փափաքով է. թէեւ զարմանալի է որ Վառաման մը, որ Արզուհանի համար ըսած էր թէ 300 հայեր մատնած է, Դաշնակցութեան անուամբ, Ուստրի Համաժողովը արգելիլու անյաջող ջանքեր ընելէ հետք, այժմ ալ յուսահատական ճիգեր կրնէ տալ ձայնելու թէ «Բրո Արմենիա»-ի համար բացուած հանդանակութեան մէջ զեղծումներ գործուած են. ուրեմն այս ողորմելին, ու իր խմբակը կուգեն արգելիլ զերազանցապէս կարեւոր թերթի մը օգնելու որ եւ է բարի կամեցողութիւն, որպէսզի չըսուի թէ այդ օգնութիւնը Հնչակեաններու գումարած համաժողովոյն որոշմամբ եղած է: Տեսնենք, եթէ Հ. Թ. Դաշնակցութիւնը շարունակէ իր անուամբը հովանաւորել Վառամանի տեսակէն յեղափոխականներ, այն ատեն պայքարը շնչատկի Դաշնակցութեան կեդրոնական վարչութեան պիտի ուղղուի. կեանքային թէ միւր յեղափոխ մարմինները քիչ մը շատ կը մոռնան որ եթէ իրենք բան մըն ժողովուրդին չնորհին է:

Տ. ԷԼՄԱՍԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Մեր մասնաւոր քրդակցին)

Սօֆիա, 25 փետր.

Սոպրանիէն այս չարթու անցող քրեթէ մասնաժողովներ ընտրութեան և երեսփոխանաց ընտրութեան վաւերացմամբ, գահաճառի պատասխաններն վիճաբանութիւնն իսկ վաղը պիտի սկսի որ անշուշտ քանի մը նիստեր պիտի լափէ, թէեւ այս պատասխան սովորաբար բաւերու և խօսքերու յեղաշրջումէ մը անդին չանցնիր և ո՛ր ասանկ չէ. երեսփոխանք բան մը չեն կորսնցներ ա իրենց գրպանէն, կամաց կամաց, ինչ հարկ կայ արտորանքի:

Այս ընթացքով ալ չը գիտեմ մինչ ցվերջ ապրիլի Սոպրանիէն պիտի կրնայ լուծել այնչափ մեծ խնդիրներ աւելի կենսական ինչպէս «տնտեսական» ոլորտ համար շատ շատ բաներ կ'ըսուին այժմէն. ինչի 1-2 նախարարութիւն, խառնել ուրիշ նախարարութեանց, օտար տէրութեանց քով գտնուած ներկայացուցիչների թիւը պակսեցնել, ամէն նախարարութեան մէջ ալ մի քանի պաշտօնէութիւններ միացնել, ամենէն աւելի կը խօսուի կրթականին վրայ, ուր կուգուի կառավարական դրպրոցների թիւը պակսեցնել, զօրաց թիւն իսկ կիսով չափ իջնցնելու խօսքեր կը պտտին ևն. ևն.

Փոխառութիւն մ'ալ պէտք է կնքել, զի առանց ասոր կարելի չպիտի լինի գործել, այլ ո՛րի հետ, ո՛րչափ և ի՞նչ պայմաններով. խնդիրներ, որոց վրայ ժողո

վորդի ամեն դասակարգ տաքուկ տաքուկ կը խօսի:

Փափրիզով, որուն համար կամ իր ծրագրին համար, զոհուեցան նախարարներ և ահագին կուսակցութիւն մը տակնուվրայ եղաւ, պիտի բնգունի՝ բանակին տկարացման վերաբերեալ որ և է առաջարկ, թէ պիտի զոհուին դարձեալ առաջարկութիւնք:

Բայց Մակեդոնական խնդիր մը կայ հրապարակին վրայ. քաղաքագէտք կը խօսին, լրագրիք կը գրեն, ժողովուրդը քիչ թէ շատ յուզման մէջ է, ամենուն հարցումն է. «Ի՞նչպէս պիտի խաղաղի այդ եղբայր երկիրը», ուր թուրքը սկսած է աւելի քան երբէք ամենայն խստութեամբ գործել. ժամ չանցնիր, որ մարդ չի բռնուի, չլանտարկուի, չընպան. նուրի. խուզարկութիւնք խանութներու, տուններու, դպրոցներու և եկեղեցիներու մէջ, և այս անուպահովութենէն միայն 15 օրուան մէջ 10000 Մակեդոնացիք անցած են կըսուի, ի Պուլկարիա. շատ նեղը մտածներ ալ կը թրքանան, մանաւանդ օրիորդներ ու կիներ, երբ յակամայս լըուած իրենց էրիկներէն, եղբայրներէն կամ աղագականներէն չունին ոչ ուտելիք, ոչ հագնելիք և ոչ ապահովութիւն կենաց, միթէ այսպէս չեղաւ և ի Հայաստան:

Հանգէպ այս անտանելի կացութեան առջի օր և երեկ շատ հաստատապէս կը խօսուէր, որ արտաքին նախարարը, Տիար Տանէվ Մէլհամէ էֆէնտիին հետ խօսելէ յետոյ «նոթա» (ծանուցագիր) մ'ալ տուած է, որպէս զի Սուլթանին բարեխնամ կառավարութիւնը վերջ տայ իրաց այս վիճակին ի Մակեդոնիա ի հարկէ որչափ կարելի է:

Միւս կողմանէ մեր կառավարութիւնը իւր երկրին մէջ Մակեդոնական ընկերութեանց հետ խստիւ կը վարուի, կ'արգիլէ զինավարժութիւն, կ'արգիլէ դրամ հաւաքել, չի թողուր որ շարժի վիճակ մը յորում գտնուած չէ երբէք Մակեդոնական Գօմիդէն:

Ձենովիէվ ալ երկրից տեսնուեցաւ Սուլթանին հետ, առաջին տեսակցութեան խստիւ դատաւիտեց թիւրք կառավարութեան թոյլ վարմունքն ի Մակեդոնիա. երկրորդ անգամին շնորհակալութիւն ընդունեց Սուլթանէն, անոր համար անշուշտ որ ուզածը կ'ընէ ի Մակեդոնիա և Ռուսը-միակ ոխի թիւ թուրքին յարեւելս- անտարբեր կը մնայ ինչպէս մնաց հայկական ջարդին ժամանակ. Մասնաւորապէս Ռուս կառավարութեան ճնշումէն է, որ մեր կառավարութիւնն ալ խստիւ կը վարուի Մակեդոնական Գօմիտէին հետ թէեւ միւս կողմէ ալ իրաց վիճակին վրայ «ծանուցագիր» կուտայ թուրքին:

Խաղիւր են ասոնք թէ կանխաժամամբ պատրաստուած ծրա

գիրներ և ու՛ր պիտի յանգի իրաց վիճակ:

Հուլիսին ոսկի է կըսեն, թէեւ շատ լռեցինք ու ոսկի մը չի վաստըկելէ զատ ունեցածնիս ալ վրայ տուինք:

Բայց այսչափը կրնամ ըսել որ ամսոյս 13 ին Մակեդոնական ընկերութիւնը ընդհանուր ժողով պիտի ունենայ ի Սօֆիա. ուր առաջին խնդիրը պիտի լինի անտարակոյս թէ ի՞նչ ընթացք բռնելու է:

Ես կը մաղթեմ, որ Ռուսուած ինք օգնէ Սարաֆօֆին և Հայկական ջարդին վրայ չի տեսնենք նաև Մակեդոնական ջարդը:

ԻՄԱՍՏԱԿՆԵՐԸ

—) —

«Վոլիսե շուր քաղառնիս քիկնարոտէն, քաղաքիս անպիտան զրայ կ'ընագցի. անսարքնորքնաւք եւ անպահաւ կը նայի քաղաքիս քանակ. յիմարի մը պիս նա ալ շիկնիլն ինչ է չգիտէր»

ԼԱՊՐԻՅԵՐ

Այսպէս են նաեւ մեր իմաստակ մանկավարժները:

Մամուլը միջոցաւ և թէ ընկերական չըլանակաց մէջ խայտառակուեցան, սակայն առանց ամշնալու կը շարունակեն մանկավարժութիւն ծախել մեզ, այսինքն բան մը զոր չունին: Սոցա պարագլուխ արհի-իմաստակը վերջիւս տեղական թերթի մը մէջ կըցկտուր գրուած մը հրատարակած է, ուր հասկնցնելէ ետք թէ համակարծիք չէ Դաւրէթի վարժարանի տնօրէն-գասաւորին ինչ ինչ ըսածներուն, —որոց վրայ պիտի վերաճառէ եղեր քերեռն ընդհուպ, իմա՛, երբոր բան մը գտնէ թղթաբերով ստանալիք մանկավարժական հանդիսարանաց մէջ — սա չորս կէտերուն վրայ կը ծանրանայ:

Ա.— Ուսուցչական մարմինը կը նմանցնէ մեքենայի մը, որոյ մէկ քանի մասերը «մըլտած» են եղեր, (մեքենան պանի՛ր է որ մըլտողի, ո՛ր մկնոտած իմաստակ) և փոխել պէտք է: Սակայն կը մոռնայ յարել որ շոգեկառք մը, զոր օրինակ, կուրնայ մեքենավար մը և հնոցպան մ'ալ, որք կը համապատասխանեն ուսուցչական մարմնոյն մէջ Տնօրէն գասաւորին և այն գասաւորին, զոր տնօրէնն իրեն խորհրդակից ընտրած է: Արդ երբ մին ապիկար ոմն է եւ միւսն ապիկարագոյն, յանցանքը մեքենայինն է եթէ չչարժիր, թէեւ ըլլան նորա ամեն մասունքըն նոր և բարւոք յարգարեալ: Իսկ երբ մեքենային ինչ ինչ կտորներն ժանգոտած են, ճարտար մեքենավարը միջոցներ ունի զանոնք փայլեցնելու զմոռնիկ թուղթով ևայլն:

Բ.— Նոր ուսուցչին նկարագրիւր կընէ: Արդեօք ամեն նոր ուսուցիչք «պահանջելի բարեմասնու

թիւններով օժտուած» են, տեսնենք:

—Կը ճանչնամ այդ նորերէն մէկը, որոյ ամբողջ մանկավարժական գիտութիւնը կը կայանայ զգուշանալու մէջ աշակերտները յանդիմանելէ և փայփայելու ա. նոնց թերութիւնները: Իսկ բարկութեան վայրկեաններուն մէջ՝ ուրովհետեւ նա ալ մեզ նման պարզ մահկանացու մ'է, հետաքրքրական է լսել աշակերտաց գլխուն տեղացած լուտանքները, որոց ամենաթեթեւն է «գետնին տակն անցնելիք» յիշոցը:

—Ուրիշ մը գիտեմ որ ոչ միայն իր գասախօսածէն տեղեկութիւն չունի, այլ չափազանց եռանդոտ ըլլալով մէկ ամառան ուսանելի դասը մէկ անգամէն կը պահանջէ. խեղճ աշակերտք կը շարժուին ինքնինքնին գոհացնելու համար, որչափ չարիւի է, այդ արտառոց վարժապետը, առաջի ծայրը ձեռ կայ: Այսպէս ոչ միայն բխմամբ, այլ ինչու դասերուն մէջ յետամնաց կ'ըլլան: Այս ալ տիպար ուսուցչի մ'է, զի նոր է, ըստ անճոռնի տրամաբանութեան մեր իմաստակ յօդուածագրին: Մանկավարժական յօդուածներ ալ կը գրէ եղեր թերթերու մէջ, թէեւ չգիտցուի թէ «գրիչը կառաջնորդուի իրմէ, թէ ինք գրիչէն»: (Ականջը խօսի «Ծանօթ» ին):

Գ.— Պէտք է աւելի հին ուսուցիչները, որոնք կ'աւրեն եղերնո. բերուն ըրածները: Սակայն նախ նորիւր ըսելով որո՞ց կ'ակնարկես, ցոյց տուր, պտրոն իմաստակ, որպէսզի մենք ալ ըստ այնմ բաղդատենք զանոնք հիններուն հետ: Երանցի դեր կատարելու պատուատականութիւն ցոյց կուտաս, լաւ. բայց նախ հասկցուր մեզ թէ սա վերը յիշուած երկու դասատուները և նմանները ո՛ր կարգին մէջ կը դասես, նորերուն մէջ թէ հիններուն, կամ թէ նորագոյններուն, յետոյ կը վիճաբանինք քեզի հետ հիններուն համար կերեւել թէ այս վերջիններէն փորի ցաւ մ'ունեցեր ես:

Դ.— Ապագայ սերունդը կըրթելու կարեւոր գործը արդի մանկավարժութեան պահանջումները «լիովին» զոհացնելու կարող ուսուցիչներու պէտք է յանձնել: Մենք ալ այդ պիտի առաջարկէինք. հետեւաբար փափաքելի է որ յօդուածագիրը յայտնէր մեզ այդ տեսակ մանկավարժ-գասաւորներու մէկ երկուքին անունները, և թէ ո՛ր համալսարանաց մէջ ուստրած են իրենց ուսումը: Զի մանկավարժութիւնը մասնագիտութիւն մ'է, որ երկու հանգիստարանի բաժանորդ գրուելով չի սովորուի, այլ կանոնաւոր դասընթացի մը հետեւելով:

Պուլկարահայոց մէջ մասնագէտ մանկավարժի մը գոյութիւնը կ'անգիտանամ: Կայ սակայն իմաստակ

ներու խմբակ մը, («Ղալաթիոյ Օ. ճախ»ը պիտի ըլլէի) որ մանկա- վարժութիւն կը ծախէ . . . օգին մէջ, ինչպէս Պոլսոյ սակարանին մէջ քոնսօլիտ կը ծախեն :

Երբեմն կիւրինցի խիօք աղբս ըն ալ խելք կը ծախէր. նո գէթ ունէր իրական արժանիք մը, լալագործութիւնը, իսկ առանձն. —ցած շահագործութիւնը :

ՎԼԻՔՆԱՅԻ

ՈՐԲԱՆԱՄԻ ՍԻԿԱՐԻ ԹՈՒՂԹ

Որբախնամիս Գործ. Ժողովը դիւանի հետ ունեցած երէկի նիս. տին մէջ, ձայններու մեծամասնու թեմա որոշեց, որպէսզի իր հը- րապարակ հանած սիկարի թուղ- թի սպառուած մէկ քանի ամիսներ շարունակուի, նկատուող համար թէ՛ ազգային երկու թուղթերէն —Հիւանդանոց և Որբախնամը— ո՛րը աւելի հասոյթ կրնայ ունե- նալ, հետեւաբար աւելի նպաստաւոր դառնալ մեր թշուառ որբիկ- ներուն :

Հո՛ս, աւելորդ չենք համարեր երկու խօսքով բացատրել այն շարժառիթը որմէ մղուած՝ Որ- բախնամս հաշի տեսաւ իր թուղ- թը հրապարակ հանել :

Որբախնամս նկատեց որ տարե գլխէ առաջ հիւանդանոցի թուղ- թը չէր ազգ. սիկականութիւն, ինչպէս նաև նկատեց նամանաւանդ որ նոյն ատեն մաքսային տուրքի ըր այնքան բարձր էին որ շատ քիչեր կը գտնուէին այդ թուղ- թէն վաճառող ու սպառող : Հետեւաբար խորհեցաւ որ, որբի ա- նուան նոյն իսկ Պուլկարիոյ մէջ թուղթ մը պատրաստել, իր դիւ- րամատչելի գնով շատ աւելի ըս. պառուս (°) կրնայ ունենալ քան հիւանդանոցինը :

Ահա վերոյիշեալ երկու ան- նպաստ պայմաններու միջոցին էր որ, Որբախնամս թուղթերու պատ- րաստութեան պէտք եղած ծախ- սերուն սկսած էր : Իսկ հիմա որ, այս երկու աննպաստ պայմանները մասամբ (մասամբ, քանի որ մաք- սային ներկայ սակերով հիւանդա- նոցի թուղթը կրկին թանկ կ'ար- ժէ վաճառողին) մեղմացած կը տեսնուի, Որբախնամս պարտք կը համարի վորձառութեան դիմել այս անգամ, որոշապէս ամրապըն- դուելու համար իր այն համոզման մէջ թէ՛ յամենայն դէպս որբա- խնամի թուղթը իր առատ սպառ- մամբ և վաճառողներու գնով դիւ- րամատչելի ըլլալուն պատճառաւ, աւելի շահաւէտ պիտի դառնայ որբին քան հիւանդանոցինը : Բան

(°) Որբախնամի սիկարի թուղթին հայ տարբէն աւելի երկրիս Պուլկար եւ օտարազգիներու մէջ սպառում գրա- նելը դրապէս եւ վորձառաբար մեզ հաւատարմներ ալ չեն պակսիր :

մը որ միայն մէկ քանի ամսեայ «քօնթրոլ»ի հետեւանօք կրնայ հասկցուիլ, որուն համար Որբա- խնամիս որոշումը նախապէս յայտ նած էինք :

Եթէ Որբախնամի տարբեր- գածութեան հակառակ յոռիք քըն նախատողներ գտնուին, թող բա- րեհաճին անձամբ կամ նամակու գիմել Գործ. Ժողովոյս, սակայն իրենց ուղիղ տրամաբանութիւն. ներով և որոշ ու մեկին փաստերով օժտուած, հակառակ պարագային չարժեք իրենց պատասխանել :

Մնա՛մք յարգանք
Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Յ. Ճանկիչեան ՏՔ. Շաքարեան

Ծ. Խմբ.— Որբախնամի Գործ. Ժողովոյ այս յայտարարութիւնէն կը տեսնուի թէ ինք քանի մը ա- միս գործնական փորձ մը կուզէ ընել համոզուելու համար, թէ ո՛ր թուղթէն ազգ. երկու բարեգոր- ծական հաստատութիւնները աւելի պիտի կրնան շահիլ, մանաւանդ կը յուսադրեն զինք թէ որբայր- նամի թուղթը աւելի շատ օտա- րազգիներու մէջ պիտի սպառուի : Մեզ փափաքելի է որ այս յոյժ իրականանայ :

Իսկ հայ ձխողներու գաղով, մենք կը յանձնարարենք անոնց որ Ազգ. հիւանդանոցի թուղթը նա խընարեն : որովհետեւ անոր իւ- րաքանչիւր տուփը որբախնամի թղթէն կրկնապատիկ աւելի շահ կը ձգէ ազգային տան :

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ստորագրեալս Ազգական վարժա- րանի տակը գտնուող ազգ. խա- նութիւն վարձակալը ըլլալով, 20 գաղ. ոսկի վարձք կը վճարէի : Բայց այս տարի նոյն հրապարա- կի խանութներու վորձքին համա պատասխան զիջչ մը ուղեւրուս պատճառաւ թաղ. խորհրդոյ և իմ միջիւ համաձայնութիւն չի գոյա- ցաւ : Որովհետեւ խորհրդոյ ան. դամներէ մին Տիւր Յ. Բարսամեան յայտարարեց թէ, եթէ պա- մանաճառուն խանութէն ելլեմ, ինք պատրաստ է 18 գաղ. ոսկիի վորձելու :

Ահա հրապարակաւ կը յայտա- րարեմ որ՝ ես իրրեւ ազգին շա- հուն նախանձախնդիր մէկը, ա- սոր պայմանաժամէն 2 օր առաջ, կը փոխադրուիմ այդ խանութէն որպէսզի աւելի սուղ, 18 ոսկիի, վորձելու պատրաստ եղող Տիւր Յ. Բարսամեանը, կամ ուրիշ մէ- կը փութայ վարձել որ պարապ չի մնայ ազգին այդ կալուածը ի վնաս ազգ. անտուկին : Իսկ եթէ ժամանակ մը այդ խանութը վար ձող չգտնուի, անկէ առաջ գալիք վնասին պատասխանատուն ուղղա կի թաղ. խորհուրդն է, որ պար տաւոր էր, ինչպէս օրէնք է, եր կու ամիս առաջ տեղական թերթի- րու միջոցաւ անուրդի դնել, որով ցարդ վարձուած կրնար :

Յ. Էնկիպարեան
6 մարտ 1904 վառնա

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Այնթապէն տրուած տեղեկու- թեանց համաձայն, անցեալները նոյն քաղաքի մէջ հայ բոլորա- կան երեց մը քանի մը երիտա- սարդներու հետ գացած խմբիկին, խումբ մը զինեալ թրքերէ յոր- ձակում կը կրէ, որոնք մասնաւորապէս կսպասեն եղեր. երեցն ու ու իր հետի երիտասարդներէն մէկ քանին հրազենի հարուածե- րէն թեթեւ մը վիրաւորուած են : Սակայն եւս ազգականներու մօտերը գտնուող Ամերիկեան Գալէթի ա. չակիւրտները փութացած են օգնու թեան հասնիլ և աւազակները փախ- ցիլ :

Նոյնպէս նոյն քաղաքին մէջ Գօ- լէթէն քանի մը բոլոր հետեւ հայ երիտասարդ մը գտնուած է կիսա- մեռ վիճակի մէջ, որուն կողորդը կտրուած է : Ոճրագործը որ Քիւրտ մէ եղեր և գողու- թեան համար գործած այդ ոճի- րը, տեղւոյն Ամերիկեան Գալէթի տեսչին չորհրդէ անբաւարարուած է :

Տեղւոյս Որբախնամը մասնա- ւոր գրուելեամբ մը շնորհակալու- թիւն կը յայտնէ Տ. Մ. Զիւմ- իրաւանի, որ ճամբորդ ազգայի- նէ մը 5 ֆրանք նուէր տուած է Որբախնամին համար :

Աղէքսանդրիա գտնուող ազ- գային մը, Պոլսոյ Ազգ. հիւան- դանոցին 100 անգլ. ոսկի նուէ- րած է փափաքելով որ իմարտոցի- նէ մէջ յարկ մը ես աւելնայ :

Հանգուցեալ Նուպար փաշայի համար արձան մը կանգնելու ն. պատակաւ կազմուած յոնձնաժողո- վը որոշեց է որ արձանը մարմա- րիոնէ և անուագապիւնէ շինուի, Այս մտքը ձեռնարկուած հանգա- նակութիւնը կը շարունակուի :

Վերջեւս Ամերիկայի Հայոց մէջ յառաջ եկած հայրենասիրա- կան և միւլթիանական շալժուսի- րուն համար նիւ Եւրօքի հայ գա- ղուլթին ալ կարեւոր բացատրու- թիւններ տրուելու մտք, տեղ-ւոյն Ս. Յովհաննէս Ակեղեցին Մարաճեան Սրբազանի նախագա- հութեան տակ ընդհանուր ժողով մը գումարուել է :

Բարեբրդի չլիւկայ գիւղացի- ները, քաղաքին մէջ տիրող թրշ- անուութեան պատճառաւ, հեռա- ճեան կիւմիւշխանէ, Տրապիզոն, Երզնկա և Սիւրաբիա կը գաղ- թեն, որով բազմաթիւ հայ գիւ- ղեր կը պարպուին :

Համիտիյէ Քիւրտերէ, Ճիւպ- րալը և Հասնալը ցեղերուն պե- տերը՝ իւրաքանչիւրը 1500-2000 հոգի ունենալով իր հրամանին տակ, Մանազկերտի և Պուլաճը- քի կողմերը արշաւած են, այնտե- ղի հայ գիւղերը աւարի տուլու և քանդելու համար. սակայն ու եւ է ընդհարում տեղը չէ ունեցած, միայն թէ այդ վայրագ խմբերը 15 օր խեղճ հայ գիւղացիներուն ամեն ունեցածները վայելած են, ու երբ դիմադրող գտնուած է, սպաննած են : Կառավարութիւնը գիւղացիներու դիմումներուն հա- կառակ անտարբեր գտնուած է :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Անգղիա մինչեւ ցայդ թիւանակալի պատերազմին համար ծախսած է 122, 250, 000 ֆաղիական ոսկի եւ այդ պա- տերազմին շարունակութեանը համար- ալ շարաթական 1, 500, 000 ոսկի կը ծախսէ :

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Պետական գանձարանին մէջ գտնուած հնչուն պատրաստ դրամին քանակու- թիւնն է 121, 433, 826 1/3 անգլիական ոսկի :

Ինչպէս յայտնի է Ֆրանսո-Ռուս մերցեղութենէն յետոյ Ֆրանսական չըր- ջանակներու մէջ արտակա գ ուսա- սիրութիւն մը տիրեց : Ֆրանսացոց այս տրամադրութենէն զլիսա որաբար օգտուելու հլան Ռուսիացի հրէաները որոնք խումբ խումբ Բարիզ թափե- ցան : Այս եկողներուն գրեթէ կէսը հրէայ աղջիկները եղան որոնց Բարիզ խումբէն իվեր օր չանցնիր որ վի- պական դէպքեր տեղի չունենան գաղ ղիական ոստանին ուր միշտ դիւցա- ղունները այդ աղջիկները կ'ըլլան :

Օր մը այդ աղջիկներէն միոյն մա- հացու կերպով երիտասարդ մը վիրա-ւորուած ըլլալը լուեցաւ : Ուրիշ ան- գամ մ'ալ կրկին այդ աղջիկներէն մին ինքզինքը դեռը նետեց. ուրիշ երկուք ալ իրենք զիրենք խեղդամա- ըրած են : Անգամ մ'ալ լուեւած է որ մէկ քանիներ ալ ատրճանակով անձ- նասպան եղան : Մէկ երկու ամիս առաջ ալ հրեայ աղջիկ մ'էր որ փոր- ձեց Փրօֆէսէօն Տէչանէլը սպան- նել : Այսօր ալ մէկ ուրիշը ելէր անոր ասոր մահու սպառնալիքներ կ'ընէ նամակով եւն :

Ծանօթ ելեքորդէտ Նիքոլա Թէզալ կը ջանայ Փորթուգալի եզերաց վրայ հիմնել իր ելեքորդական ընդու- նարանը որով անիւն հետագրի հա- ղորդակցութիւնը կը յուսայ Եւրոպա- յի եւ Ամերիկայի մէջ հիմնել :

Ռէյխստակի ներկայացուած հաշ- ուեցուցակէ մը կերելի որ Գերմանիա օտար երկրներու մէջ բացած է 105 վարժարան որոնց ամէնքնալ կայսերա- կան գանձարանէն որոշ գումարներ կ'ստանան :

Ամենամեծ դրամական օգնութիւնը կը լինի Կ. Պոլսոյ գերմանական դըպ- րոցին, որուն 30, 000 մարքէ աւելի է : Կալացի դպրոցին կը արուելի 11, 900 մարք, Անվէրայի դպրոցին 10, 000, Պրուքսէլինին 10, 000 Պուլաքէստի չորս գերմանական դպրոցներուն կը տրուի 10, 000 մարք, Պրագիլիոյ մէջ 20 գերմանական դպրոցներ որոնք նո նպէս դրամ կ'ստանան : Շրիլի մէջ 12. անգղիական դաղթականութեանց մէջ 12. Ռումանիոյ մէջ 12. Եղիպտոսի մէջ 12 եւ Թրանսիլանի մէջ 2 դպրոց- ներ դրամական օգնութիւն կ'ստա- նան :

Ֆրանսայի մէջ բարեբու հսփա- ղանց ազատութիւն լինելով բնական պիտի լինէր կարծել թէ Ֆրանսայի մէջ անհարազատ դաւանները աւելի շատ պիտի լինին քան թէ ուրիշ եր- կրներու մէջ : Բայց այդ կարծիքը ուղիղ չպիտի լինէր վասնզի ֆրանսան միայն վեցերորդ տեղը կը բռնէ : Ա- հաւաստի ցուցակ մը որ բաւականին հետաքրքիր է եւ որ եղած է 0/0 ի հաշուով :

Աւստրիա	00	ին	13.7
Փորթուգալ	»	»	12.1
Շուէտ	»	»	10.4
Գերմանիա	»	»	9.2
Պելճիքա	»	»	9.0
Ֆրանսա	»	»	8.8
Հունգարիա	»	»	8.3
Սկովոնիա	»	»	7.6
Իտալիա	»	»	7.7
Ֆինլանտիա	»	»	6.5
Անգղիա	»	»	4.1
Ջուրիցերիա	»	»	4.0
Հոլանտա	»	»	3.5
Իռլանտա	»	»	2.7
Ռուսիա	»	»	2.7
Յունաստան	»	»	1.5
Սերպիա	»	»	0.4

Սիկիլիոյ Պալէրմա քաղաքէն հեռագրուած է թէ երկու օրէ իվեր կարմիր ամպ մը քաղաքին վրայ կը տիւրէ : Երկինքը սաստիկ կարմիր է,

հարաւային սաստիկ հով մը կը տիրէ։
Կաթիլ կաթիլ ինկող անձրևի շի-
թերը կը նմանին չորացած արևնի։ Այս
երեւոյթը որ արեւնոս անձրևը կը
անուանուի հետեւանք է այն աւազին
որ քամին կը բերէ արեւիկեան անա-
պատներէն։

Նոյնանման երեւոյթ մը կը տես-
նուի տաքոյլ կղզւոյն մէջ։

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

—)o(—

ԹԻԻՐԻՍԻԱ

Սելանիկոն վերին պիւր
թելէկրաֆա նազարէն, շէնքը մէջ
բիւր տէ տէրտէսթ օլունան Բօսֆ
նամ քիմէսնէն իւզէրինտէն զո-
հուր իտէն քեղաղտար միյանըն
տա՝ Ստանպուլտա պուլունան պիւր
մուսլիմին մէջթուպտա պուլուն
մըջ քի, պու մէջթուպտա մուսլի
մը մէջքիւր՝ Սուլթանը թելէֆ իթ
մէջ թէճըրկապէսին տէրէօհտէ իթ
տիկինի սէօյլէմիշ օլունաղունտան,
տէրտէսթէն հապս օլունմըջ տըր։

— Ինկիլթէրա, Ֆրանսա վէ իթա
լիա տէօվէթլէրինին Սլթանպուլ էլ
չիլէրի Պապը Ալիյէ պիւրէր նօթա
վերէրէք Մակեդոնիա տաքի գարը
չըզլըզլարա մէյտան վերէն գապա
հաթլըլարըն ճէզալանմալարըն վէ
պիսուշ էհալիյէ տօգուլունմալարըն
նը թալէպ իթմիշլէր։

— Սուլթան ինկիլթէրա իլէ բօ
լիթիգալը տիւզէթմէք վէ պարըշ
մաք իչիւն ֆէվզէլատէ զայրէթ
իթմէքտէ տիր։

— Սլթանպուլտան Ֆիւրկաթ թարի
գի իլէ էնէպի կազէթալարընա վէ
րիլէն մալիւմաթա նազարէն, Սուլ
թանըն հիւքիւմէթինտէն շիքեա
յէթլէրի օլան ժէօն թիւրքլէրտէն.
էրմէնիլէրտէն վէ Մակեդոնիալը
լարտան միւրէքքէպ պէօյիւք վէ
ուսուլմի պիւր իթթիւմալըն թէրթի
պի իչիւն ժէօն թիւրք գօմիթէսի
ճամատ Մահմուտ փաշայը տալէթ
իթմիշ տիր։

— Սլթանպուլտան վերին պիւր
թելէկրաֆա Տրապիզոն իլէ Պիթիւս
վիւայէթի իչիւն գարանթինա թէ
իսիս օլունտըզ պիւրիւրիօր։

— Մատրիտ (Սպանիա) Օսմանլը
սէֆերի Սուլթանա թելէկրաֆա,
չայէթ սէքիւ կիւնէ գոտար սէֆա,
րէթ ալըզ ու մէսորիֆլէրի վերիւ
մէջ իսէ, մէսուրիլէթինի պրա-
պուպ կիտէճէկինի պիւրիւրմիշտիր։

— Սլթանպուլտան ալընան մալիւ
մաթլարա նազարէն, հէր պիւրի
եիւզլէրճէ ֆամիլիա կէչինտիրէն
էրմէնի եազմա թիւճարլարընտան
չօզլարը հապս օլունմըջլար։ Չապը
թա պէհանէ օլարաք մէջքիւր եազ
մաճըլարըն ֆապրիգալարընտա Գլօ-
րաթ տը Բօթաս պուլունմասընը
կէօստէրմէքտէ վէ մէջքիւր էզա-
տան տինամիթտէ իմալ օլունտըզ
իտտաա իթմէքտէ տիր։ Հալպու
քի Գլօրաթ տը Բօթաս էսկիտէն
պէրի եազմահանէլէրտէ պօյա ի-

չիւն գուլանըլըր պիւր էզա տըր։
Պիզճէ պէ էն տօղրու սէպէպի
մէջքիւր թիւճարլարտան փալա
չէքմէք տիր։

ԻՍԻՍԻԱ

Չարըն խուսուսի միւսթէշարլա
րընտան մէարիֆ նազըրը Մ.
Պօկտէքօֆ, պիւր գաշ կիւն էպվէլ
առէթի իւզրէ՝ մէարիֆ նէզարէ
թի տարիէսինտէ րէսմի գապուլ
իճրա իթմէքտէ իքէն, տարիւլֆի
նուն շակիրալէրինտէն պիւրի թարա
ֆընտան րէվօլլէր իլէ ճէրհ օլըն
մըջ իտի։ Մ. Պօկտէքօֆըն պու
սուրէթլէ ճէրհի ուսուլմ րուսիա
տէվայիրը րէսմիլէրինտէ րէք
ֆէնա պիւր թէէսիւրէ մուճիպ օլ
մուշ տըր։

Սօն թելէկրաֆալար Մ. Պօկտէ
քօֆըն վէֆաթ իթտիկինի պիւրի
րիօրլար։

ՏԱԻԻԼԻԵՆ

Վիէննա կազէթալարըն պէյա
նաթընա նազարէն, Մ. Գարապէ
լօֆ գապինէսի, օրտունըն մրգտա
րընը ինտիրմէք, հարպիլէ նէզա
րէթի պիւստէսինտէ պիւր թազըմ
թէնդիլաթ իճրա իթմէք, ապէրի
զապըթան մաշալարընտան պիւրէր
մըզտար քէսմէք իչիւն գարարը
գաթի վերմիշ օլունաղու կիպի պիւր
գաշ վարիտաթ ու հասըլաթ մօ
նօրօլ իթմէք ուսուլընտա րէտ ի
տէրէք, էհալիյի էնէպի պանգալա
րըն թէէսիւրինտէն գուրթարմազա
տա զայրէթ իտէճէք իմիշ։

Թէքրար Սօֆիա տան վերին
մալիւմաթա նազարէն, գապինէ
սանճալարըն մըզտարը 12 իլէ էն
տիրէճէք վէ պիւր գաշ պէօյիւք
մազամլար լաղի իլէ՝ պազը նէզա
րէթլէրտէք շիւպէլէր պիւրէշտիրէ
ճէք. վէ մէարիֆ նէզարէթի
պիւստէսինտէն տէ պիւր գաշ միլիոն
ֆրանք թէնգիս օլունաճաք տըր։

ԹՐԱՆՍՎԱՍԱ

Հօրէնսօ Մարքուէդտէն վերին
պիւր թելէկրաֆա նազարէն, Հօրտ
Քիլնէր իլէ ժէնէրալ Պօթա արա
սընտա ճէրէնա իտէն միւզաքէրէնին
նէթիճէսիւզ գալմալաճաղը գա-
վիէն մէսուլ օլունմազտա տըր։

Ուսուլմ Պօթլէրէն աֆլը ուսու
մի օլունաճաղը կիպի Թրանսվալ
Օրանթ էյալէթլէրինտէ կէնիշ իմ
թիւայլար վերիլէճէք իմիշ։

Հաթթա «Տէյլի Մէյլ» կազէ
թասըտա ինկիլիզ տէօվէթի՝ աֆ
վը ուսուլմի վէ խալապ օլունան
մատէնլէրին վէ Պօթլ չիֆթլիլէ
րին թամիր ու թէքրար ինչասը
իչիւն էնէսմիլէթի պիւր մէպալ
իսթիգալ իտէճէկի Մ. Քրիւկէ
րէ թէքլիֆ օլունտըզըն եազը-
լօր։

— Ժէնէրալ Ֆրէնչին Պօթլէր իլէ
վուզու պուլան պիւր միւտարէպէ
տէ 46 Պօթլ եարալանմըջ վէ Թէ
լէֆ իտիլմիշ, բէք չօգտա հէսիւր
ալընմըջ տըր։ Պուլարտան մաա

տա թէքրար քիւլլիլէթի եիլէճէք
հալմանաթ, արապս էլէ կէչիլիլ
միշ։

— Մէյտանը հարպտա պուլունան
Պօթլ ժէնէրալարը հալը հազրար
պիւր նիհայէթ վէրմէք իչիւն ֆէվ
գէլատէ պիւր իճթիւմաա պուլուն
մուշլար տըր։

— Ժէնէրալ Տէվէզ Սէնէգալի
նամ մահալէ չէքիլուպ, Ֆիքսպուրկ
ճիւլարընտա պուլունան Պօթլ չէթէ
լէրինի քէնտի մայլէթինէ պիւրէշ
տիրմէք իւզրէ իմիշ։

— Թրանսվալտա գուհուր իտէն
եուսուրճաք հաթթալըզըն էօնիւ
նիւ ալմաք իչիւն Մ. Քրիւկէր Ֆը
րանստան հէքիմէր իսթմիշ օլ
տուղու թէլէկրաֆա պիւրիւրիօր։

Թրանսվալտա Հօրտ Քիլնէր իլէ
Ժէնէրալ Հօրի Պօթա պէյինտէ
ճէրէնա իտէն միւզաքէրէնտէն տօ
լայը, ինկիլթէրա մէճիւր վիւքէ
լասը ֆէվզէլատէ պիւր իճթիւմաա
պուլունմըջ տըր։

ԱՄԵՐԻԿԱ

Իուլանտալը մէհուր վաթանէր
վէր իսպէր էմմէնին վէֆաթընըն
133 ինճի սէնէյի տէվրիլէսի միւ
նասիպէթի իլէ Նիւ Եորքտաքի իու
լանտալըլար պէօյիւք պիւր միթինկ
իճրա իտուպ ինկիլթէրայա գար
չը նութալար սէօյլէնիմիշ վէ պու
նութալարտա զայրէթ հապարէթի
վէ շիտտէթի լիսան գուլանըլմըջ
տըր։

ՉԻՆ

— Մ. Ամերիկա տէօվէթի Չին.
տէ պուլունան գուլվէի ապէրի
սինի կէրիլէ չէքմէկէ գարար վէ
րուպ պու խուսուստա վաշինկ.
թօնտան գօմանտան Շաֆէյէ էմր
վերիլմիշ տիր։

— Էնէպի ապէրլէրի Չինտէն
չէքիլմէքսիլին իմբէրաթօրըն
Բէքինէ տէօնմէյէճէկի Լի Հունկ
Չանկ միւքէրէրէն պէյան իթմիշ
տիր։

— Մարէշալ Վալտէրգէնին Չին
իչէրլէրինէ տօղրու թէրթիպ իթ
միշ օլունաղու սէֆէրլէրէ, Ֆրանսա
լիզուլը ֆէվզէլատէ օլմատըզ
տան սօնկրա իլթիւրաք իտէ մէ
յէճէկինի րէսմէն Մարէշալա պիւ
տիրմիշ տիր։

— Ամերիկա ապէրլէրի ալա
ֆրանկա Ապրիլ նիհայէթինէ տօղ
րու չէքիլմէյէ պաշալուպ Բէքին
տէ եալընըզ 150 քիչի պըրազը
լաճաք։

ԱՆՄԱՆԻԱ

Ալմանիա մէպուլունան մէճիւրի Չին
սէֆիլլէրի իչիւն թէքրար 123 միւ.
322 պին մարքըն սարֆընա իւպվէ
թէն րէյ վերմիշ տիր։

— Իմբէրաթօրըն եարասը էյի
լէշմէյէ եիւզ թուլթուշ օլունպ
պիւր իքի հաթթալա գատար պիւս
պիւլիւն սափուշաճաղը պիւրիւրի
միշ տիր։

Պուլտան պէօլլէ իմբէրաթօրըն
կէչէճէք եօլարընա ահալի իւզէ

րինէ սըզը նէզարէթ օլընմաք
վէ իմբէրաթօրը տա սիւվարի
ժանտարմա վէ սսկէրլէր իլէ մու
հաֆապա իտիլմէսի գարարաշ-
տըրլմըջ տըր։

«ԻՐԱՆԻՆԻ» ԿԸ ԾԱԽՆԵՆ

Վառնա Բօսթին գիւմաքի գրա
վաճաք։ Նաւամտոյցիմ փօղոցը
ժիւսվաճաք Տ. Դանիէլ Մալախան.
Ռուսլոյք Շիւսվաճաք Տ. Մ.
Թիւլիւնճեան։
Գալիլիէ Տ. Կրպ. Էրզնկաչիան
Աղէքսանդրիա Տ. Ստեփան
Մարզպանեան
Ֆիւլպոպ Տ. Կարապետ Մա
րուլեան

Ուստր Տ. Թ. Ֆրանքեան
Լօվէլ Տ. Թ. Պէտրիչիան
Լօրէնս Տ. Տիգրան Պօյաճեան

ՊԼԿ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Սօֆիա քաղաքի վիճակահանա
թեան տոմսակներով իրենց բազը
փորճիլ փափաքողներ թող չիմեն
Տիւր Կարապետ Շիւրինեանի, սե
ղանաւոր ի վառնա, և Տիւր Մ.
Թիւլիւնճեանի ի Ռուսլոյք։

Ուրիշ քաղաքներէ եղած յանձ
նարարութիւնը ամենայն ճշգու
թեամբ և անմիջապէս կը գործա
դրուին։

ԹԻԻՃԱՐԻՑԷ

ՉՍԻՐԷ

ՊՈՒՂՏԱԾ		
Վալոն. 51/56 լի հէք.	7.80/8.80	
Արապա 50.58 լի հէք.	8.10/10.60	
ԱՐՔԱ		
Վալոն 100 քիւ.	9.—/9.40	
արապա 38.47 լի հէք.	5.60/6.—	
ԵՈՒԼԱՅ արապա	4.—/4.60	
ՖԱՍՈՒԼԻԱ 100 օգա	25.—/30.—	
ՉԱՎՏԱՐ	7.60/8.40	
ՏԱՐԷ	5.60/6.20	
ՄԸՍԸՐ վալ. 56—57 լի.	6.45/6.60	
Արապա հէք.	7.—/7.40	
Կիւնտէ 120/150 արապա կէլմէք	6.45/6.60	
տիր. վէ վալոն 20/25.		
Վալոն մուսլէլէսի ալթուն ֆրանք- լէ, արապա կիւմիւլէ, Նար. 22.90		

ԲԱՍՈՒԳ

Վառնա մաղաղալարընտա իրիլք սաթըլարը.		
Ինկիլիզ իրիկի Ն.	8/14	10.50
»	Ն. 18/24	12.50
Եկերի իրիլք Ն.	8/14	10.50
Աթըլմըջ բամուզ հօգդա		2.20

ՊԱԳՊԱԼԷ

Վառնա ըրաղաղնտա պաղալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալ- թուն ֆրանք իլէ.	Ֆր. Սճր.	
ԳԱՀՎԷ	1.65/1.75	
ՇԷՔԷՐ. — (Բէլլէ) քիւ	—, 59	
» (Բէլլէ) սանաթ	30.50	
Բիւրինձ. — Ճարոն չու-		
վալը.	40.—	
Բիւրինձ Ֆիլիպէ չուվալը	37.50	
Բիւրինձ—Ինկիլ.	30.—	
»	51.—	
ԿԱՀ. — անտրղր	7.60	
ՉԷԹԻՆ ԵԱՀԷ. — քիւ	1.15/1.20	
Գարա իւզիւմ	—, 43	

ՍԱՐԱՅԻՑԷ

Նարոլէոն 22 ֆր. 73 սանթիմ
Օսմ. լիւրար 22.82 1/2 ֆր. ալթուն։

Отговорникъ Н. Драгулевъ

П. «Взаимность» Варна